**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ**

**Ո Ր Ո Շ Ու Մ N 199 -Ա**
**08 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2021Թ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՄԱՐԶԻ «ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՎԵՐԱԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-դ մասով, 13-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության 2021թ պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215–Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերի հաշվարկման և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 25-ի N 773 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2016 թվականի օգոստոսի 24-ի N 1262-Ն որոշումները

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1 . «Հայաստանի Հանրպետության 2021թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով ՀՀ Վայոց ձորի մարզպետարանին «Հանրակրթական ուսուցում» 1146 ծրագրի տարրական, հիմնական, միջնակարգ ընդհանուր կրթության 11001, 11002 և 11003 միջոցառումներով հատկացված գումարը բաշխել մարզի «Հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների միջև՝ N1 հավելվածի համաձայն:

2. Հանձնարարել մարզի «Հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարներին հատկացված գումարների

շրջանակներում սեղմ ժամկետում, ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների, կազմել նախահաշիվներ և ներկայացնել մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչություն:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության վրա:

12/13/2021

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 **Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ք. Եղեգնաձոր

Հավելված N 1
Հաստատված է
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ
__________ 2021թ.
N ____ ՈՐՈՇՄԱՄԲ

ՀՀ 2021թ պետական բյուջեով ՀՀ Վայոց ձորի մարզպետարանին 1146 ծրագրի <տարրական , հիմնական և միջնակարգ ընդհանուր հանրակրթության > 11001,11002 և 11003 միջոցառումներով հատկացված գումարի վերաբաշխումը ըստ ՊՈԱԿ-ների

| Դպրոցի անվանումը | Ընդամենը | Տարրական | հիմնական | Միջնակարգ | Տարրական /ավելացվող և պակասեցվող/ | հիմնական | Միջնակարգ | Տարրական | հիմնական | Միջնակարգ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | 3 | 4 | 5 | 6 | 8 | 9 | 10 | | | |
| Զառիթափի միջն. (մ. դ.) | 51374.5 | 20163.7 | 20762.9 | 10447.9 | 4500 | | | 15663.74 | 20762.89 | 10447.91 |
| Խաչիկի միջն. (լ. մ. դ.) | 43874.8 | 15227.7 | 18437.8 | 10209.4 | 1400 | | | 13827.65 | 18437.76 | 10209.41 |
| Խնձորուտի միջն. (մ. դ.) | 45542.4 | 15986.4 | 18532.8 | 11023.1 | | | | 15986.41 | 18532.85 | 11023.12 |
| Հորսի հիմն. (լ. մ. դ.) | 20065.4 | 6310.7 | 13754.7 | 0.0 | -1500 | | | 7810.716 | 13754.72 | 0 |
| Մոզրովի հիմն. (մ. դ.) | 16112.3 | 1472.9 | 14639.4 | 0.0 | -3000 | | | 4472.891 | 14639.41 | 0 |
| Սերսի հիմն. (բ/լ մ. դ.) | 21738.1 | 7716.1 | 14022.0 | 0.0 | -1400 | | | 9116.123 | 14021.95 | 0 |
| | | | | | | | | | | |
| Ընդամենը | 198707.5 | 66877.5 | 100149.6 | 31680.4 | 0.0 | 0.0 | 0.0 | 66877.53 | 100149.6 | 31680.44 |
| | | | | | | | | | | |